ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 322-Ա/2 12.03.2020թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ, ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով իրականացվող մշակութային ծրագրերի «Մշակութային կրթության ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ», «Թատերարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ», «Երաժշտարվեստի և պարարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ», «Կինոարվեստի ստեղծագործական միջոցառումներ», «Տեսարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ», «Այլ մշակութային նախագծեր և միջոցառումներ», «Ոչ նյութական մշակութային ժառանգության նախագծեր և միջոցառումներ», «Գրականության հանրահռչակմանն ուղղված նախագծեր և միջոցառումներ» և «Թանգարանային և գրադարանային ոլորտների նախագծեր և միջոցառումներ» անվանակարգերի մրցութային հանձնաժողովների նիստերի արձանագրությունները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) պատվերով իրականացվող մշակութային ծրագրերի մրցույթների արդյունքում հաղթող

ճանաչված ծրագրերի, իրականացնող կազմակերպությունների և հատկացվող գումարների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Նախարարության գլխավոր քարտուղարին կնքել պայմանագրեր՝ համաձայն հավելվածի:

3. Նախարարության ժամանակակից արվեստի վարչության և մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետերին

ա. հսկողություն իրականացնել պայմանագրերի, պայմանագրերով սահմանված աշխատանքների կատարման և բովանդակային հաշվետվությունների ներկայացման ժամկետների կատարման նկատմամբ;

բ. պայմանագրերով նախատեսված բովանդակային հաշվետվությունները ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դրանց վերաբերյալ եզրակացությունները տրամադրել ֆինանսաբյուջետային վարչությանը;

գ. մինչև պայմանագրերի գործողության ժամկետների ավարտը նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնել պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունների նախագծերը և բովանդակային հաշվետվությունները:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալներ Ա. Խզմալյանին և Ն. Խաչատուրյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X